

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՂ. ՄԱՏԹԵՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ

Նորընտիր ՎԵՂ. Մատթէոսի կաթողիկոսական կոչման մէջ հաստատուելու մասին թէպէտև դեռ պաշտօնապէս Պ. Բուրգից լուր չկայ ոչ մամուլի մէջ, ոչ էջմիածին, բայց տեղւոյս թերթերի հաղորդած տեղեկութիւնների համեմատ Կ. Պօլսի ռուսական դեսպանատունը ծանուցել է այդ մասին իրան իզմիրլեան սըրբազանին և վերջինս էլ հեռագրով շնորհակալութիւն արել Կայսեր Կ. Պօլսի թղթակիցները զանազան տեղեկութիւններ են հա-

ղորդում, թէ հայ ժողովուրդը շնորհաւորանքներ է ուղղել ՎԵՂ. հին հաստատութեան առթիւ, թէ բօրիշէները բարեօք են համարում յետաձգել մի քանի ամսով դէպի Կովկաս ուղևորութիւնը, թէ Ն. Ս. էջմիածին գալուց առաջ Պ. Բուրգ կուղևորուի Ն. Մ. Գահոյից իր շնորհակալութիւնը յայտնելու հաստատութեան առթիւ, մինչև անգամ հաղորդում են թէ հետը ուղքեր կուղևկցեն և այլն ևլն:

Զարմանալի է սակայն, թէ ինչպէս է, որ մինչև այժմ ոչ մի պաշտօնական հաղորդագրութիւն չկայ էջմիածին, որը անկարող է լրագրական լուրերի համեմատ կարգադրութիւններ անել նորընտիր հայրապետի ընդունելութեան համար:

Մինչդեռ Պօլսահայ լրագիրներն աւետում են նոյն իսկ, որ «Ս. Հայրապետը շուտով հայրապետական պատարագ պիտի մատուցանէ Կ. Պօլսոյ Մայր եկեղեցւոյն մէջ»:

ՍԻՑԻԼԻԱՅԻ ԱՂԵՏԸ

Բնութեան ամեն մի չնչին երևոյթ ներշնչում է մարդու պատկառանք որքան էլ ուսումնասիրած ու յայտնի լինի նա գիտութեան: Մարդու համար, որ դեռ չի կարողացել թափանցել գոյութեան իմաստը, չգիտէ սկիզբն ու վերջը, որ մոլորում է բնութեան ու կեանքի հազարաւոր գաղտնիքների լաբիրինթոսի մէջ, կարող ենք, առանց չափազանցութեան ասել, որ զարհուրելի են այն սոսկալի բնական աղէտները, որ երկրի գոյութեան շրջանում տեղի են ունենում նոյն իսկ երկրի վրայ:

Պոմպէյ, Անի, Մարտինիկ կղզի. այս պատմական անուններին աւելացաւ մի անուն ևս, Սիցիլիա կղզի, որ իւր աղէտի թարմութեամբ ու չափով մոայլեցնում է մարդու միտքը ու նուազեցնում նրա մեծութիւնը բնութեան մէջ: Մարդը կրում է իւր վրայ բնութեան աղէտի հետեանքը, անզօր ու անօգնական հասկանալու այն աղէտի պատճառները, որը առաւ իւր գիրկը 150 հազարից աւելի մարդ ու աւելի մեծ քանակութեամբ մարդիկ թողեց թշուառ ու տառապալից դրութեան մէջ:

Միտքն ու զգացումը անկարող եղան մեղմացնել բնութիւնը, այնքան թշուառ է մարդը:

Գիշերուայ անթափանց մթութեան մէջ դղրդաց երկիրը, տեղաց ուժգին անձրև, ալիկոծուեց ծովը ու ալիքները փրփրալից բարձրացան երկինք: Կապոյտ ջրերի սպիտակ փրփուրի մէջ թաղելով մի ամբողջ քաղաք: Գետինը բացեց իւր անհիշ բերանը ու գերեզման դարձաւ մի ամբողջ քաղաքի, նրա անցեալով ու ներկայով...

Մաքի շնորհիւ երկրագնդի միջից իսկ ձեռք բերած վառուղ նիւթը կլանեց այն ամենը, ինչ որ խնայել էին գետինն ու ալիկոծ ջրերը:

«Մօստերբելլօ» նաւը փրկեց 500 մարդ. նրանք զարհուրած պատմում էին աղէտի մասին ու Դանտէի նկարագրած դժոխքը իւր զոյներով նսեմանում էր այդ պատմածի առաջ:

Մի երեւում ևս ու բնութիւնը գրկեց նորից իւր անտարբեր սառնութիւնը:

Հանգստացաւ Սիցիլիա կղզին...

Լռեցին ծովի ալիքները, անձրևը դադարեց ողողել փլատակները...

Թրթռաց զուարթ լուսաբերը ու Եկաւ սփոփելու թողած խաղաղ կեանքն ու մարդկային անդորրութիւնը:

Բայց իզո՞ւր...

Մովի ջրերի վրայ լողացող թշուառ փլատակները դիմաւորեցին նրան, գեղածիծաղ Սիցիլիայի բնութեան ու ծովի, զուարթ աղջիկ ու տղայի փոխաբէն:

Այլանդակուեցին եզրները, փոխուեց Միսինի նեղուցը...

Կործանուած Սիցիլիան մարդկութեան համար մի նոր սպացոյց է թէ՛ որքան փոքր է մարդը բնութեան ոյժի առաջ. որքան խեղճ է նա ու անօգնական: Եւ եթէ այդ այդպէս է, որ անհերքելի է, ուրեմն որպիսի ոչնչութիւն է մարդը իւր առօրեայ կեանքում...